ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՄԻՍԱԿ ԱՎԱԳՅԱՆ

Միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման արդի առանձնահատկություններից է աշխատուժի միջազգային միգրացիայի ծավալների ընդլայնումը, ինչը պայմանավորված է գլոբալացման և տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների խորացմամբ, աշխարհի երկրների միջև տնտեսական զարգացման տեմպերի անհամաչափ աճով և այլն: Միջազգային միգրանտների թվաքանակի սրընթաց աճի մասին է վկայում այն, որ եթե 2000 թ. նրանց թիվն աշխարհում 173 մլն էր, իսկ 2010 թ.՝ 220 մլն, ապա 2017 թ. այն գերազանցում էր 257 մլն-ը: Ընդհանուր առմամբ բնակչության միջազգային միգրացիայի դրդապատճառների հիմքում ընկած է մարդկանց՝ սեփական կենսամակարդակը բարձրացնելու և հետագա սերունդների համար առավել բարեկեցիկ կյանք ապահովելու ձգտումը: Այդ է պատճառը, որ 2017 թ. միջազգային միգրանտների գերակշիռ մասը՝ մոտ 64 %-ը (165 մլն մարդ), բնակվում է բարձր եկամուտ ունեցող երկրներում, իսկ 32 %-ը (81 մլն մարդ)՝ միջին, և ընդամենը 4 %-ը (11 մլն մարդ)՝ ցածր եկամուտ ունեցող երկրներում[1]:

Հարկ է նշել, որ միջազգային միգրանտներն աշխարհում սփռված են խիստ անհավասարաչափ: Այսպես, 2017 թ. տվյալներով նրանց ավելի քան 50 %-ը բնակվում է աշխարհի ընդամենը 10 երկրում: Աղյուսակ 1-ից պարզորոշ է դառնում, որ միգրանտներ ընդունող երկրների շարքում առաջին տեղում է ԱՄՆ-ն, որին 2017 թ. բաժին է ընկել միջազգային միգրանտների 19.3 %-ը: Երկրորդ և երրորդ տեղերում են Սաուդյան Արաբիան և Գերմանիան, որոնցից յուրաքանչյուրում բնակվում է միգրանտների 4.7 %-ը: Չորրորդ տեղում Ռուսաստանն է, որտեղ բնակվող միջազգային միգրանտների թիվը 11.7 մլն է (4.5 %): Հատկանշական է, որ 2000 թ. ռեցիպիենտ (միգրանտներ ընդունող) երկրների շարքում Ռուսաստանը զբաղեցնում էր երկրորդ հորիզոնականը. հետագա անկումը պայմանավորված է բնակչության միջազգային միգրացիայի աշխարհագրական կառուցվածքի փոփոխություններ-

[1] Տե՛ս «International Migration Report 2017: Highlights». United Nations, New York, 2017, էջ 4:

րով, ինչպես նաև հետխորհրդային երկրներից 1990-ական թթ. սկսված արտագաղթի (հիմնականում՝ դեպի Ռուսաստան) տեմպերի աստիճանական նվազմամբ և միգրանտների ներգրավման պայմանների օրենսդրական դաշտի խստացմամբ: Խոշոր ռեցիպիենտ երկրների տասնյակում են նաև Միացյալ Թագավորությունը (3.4 %), Արաբական Միացյալ Էմիրությունները (3.2 %), Ֆրանսիան (3.1 %), Կանադան (3.1 %), Ավստրալիան (2.7 %) և Իսպանիան (2.3 %):

Աղյուսակ 1

Աշխարհի տասը երկրների իմիգրանտների քանակը 2000 և 2017 թվականներին[2]

մլն մարդ

Երկրներ	*2000*	Երկրներ	*2017*
ԱՄՆ	34.8	ԱՄՆ	49.8
Ռուսաստան	11.9	Սաուդյան Արաբիա	12.2
Գերմանիա	9.0	Գերմանիա	12.2
Հնդկաստան	6.4	Ռուսաստան	11.7
Ֆրանսիա	6.3	Միացյալ Թագավորություն	8.8
Ուկրաինա	5.5	Արաբական Միացյալ Էմիրություններ	8.3
Կանադա	5.5	Ֆրանսիա	7.9
Սաուդյան Արաբիա	5.3	Կանադա	7.9
Միացյալ Թագավորություն	4.7	Ավստրալիա	7.0
Ավստրալիա	4.4	Իսպանիա	5.9
Ընդամենը	*93.8*	*Ընդամենը*	*131.7*

Ինչպես նշվեց, բնակչության միջազգային միգրացիայի ծավալների աճի կարևորագույն պատճառներից մեկը աշխարհի տարբեր տարածաշրջաններում տնտեսական ինտեգրման գործընթացների ինտենսիվ ծավալումն է, որից զերծ չէ նաև Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ): Վերջինիս ձևավորմամբ անդամ պետությունների միջև միգրացիոն հոսքերը հետխորհրդային ժամանակաշրջանից հետո կրկին նոր թափ ստացան:

ԵԱՏՄ անդամ յուրաքանչյուր պետություն աշխատուժի միգրացիայի ոլորտում ունի իր հետաքրքրություններն ու նպատակները, որոնք տարբերվում են միմյանցից՝ կախված թե՛ երկրների տնտեսությունների վրա ունեցած ազդեցությունից և թե՛ միգրացիայի դրդապատճառներից: Դրանք ներկայացնենք ըստ առանձին երկրների:

Ռուսաստան

ԵԱՏՄ-ում միգրացիոն ներհոսքի հիմնական կենտրոնը եղել և մնում է Ռուսաստանը: Եթե հաշվի առնենք, որ 2017 թ. միջազգային

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 6:

միգրանտների ընդհանուր թիվը կազմել է աշխարհի բնակչության 3.4 %-ը, իսկ միայն Ռուսաստանում բնակվող արտաքին միգրանտների թիվը՝ բնակչության 7.9 %-ը[3], ապա պարզ է դառնում, որ թեև ԵԱՏՄ քաղաքացիներին առանց աշխատանքային թույլտվության ԵԱՏՄ այլ պետություններում աշխատելու հնարավորություն է տրվել, սակայն Ռուսաստանը շարունակում է մնալ ոչ միայն այդ ինտեգրացիոն կառույցի, այլև ԱՊՀ երկրներից միգրանտների տեղաշարժի հիմնական ուղղությունը: Թեև Ռուսաստանում ոչ ԵԱՏՄ անդամ ԱՊՀ մյուս պետությունների քաղաքացիների համար սահմանված են աշխատելու առավել խիստ օրենսդրական նորմեր, միևնույնն է, ԱՊՀ երկրների պատմական ընդհանրությունները, Ռուսաստանի հանրային կյանքին առավել արագ ինտեգրվելու հնարավորությունները, ռուսաց լեզվին հիմնականում տիրապետելու կարողությունները թույլ են տալիս նշված երկրների քաղաքացիներին (հատկապես Ուզբեկստանի և Տաջիկստանի) հաղթահարել օրենսդրական բոլոր խոչընդոտները և ստանալ Ռուսաստանում օրինական աշխատելու հնարավորություն, որն էլ պայմանավորում է Ռուսաստանում միջազգային միգրանտների թվաքանակի անընդհատ աճը: Ահա թե ինչու տնտեսագիտական գրականության մեջ առկա տեսակետներից մեկի համաձայն՝ բնակչության միգրացիայի վրա ազդում է այնպիսի գործոնների համալիր, որը պատմական այս կամ այն ժամանակաշրջանում էական դեր է խաղում միգրանտների տեղաշարժի ձևավորման գործում[4]:

Բացի այդ, ի տարբերություն ԵԱՏՄ անդամ մյուս երկրների՝ Ռուսաստանում 2007-2016 թթ. տնտեսապես ակտիվ բնակչության թիվն աճել է ընդամենը 1.8 %-ով, որը, ի դեպ, ամենացածր ցուցանիշն է ԵԱՏՄ երկրների շարքում, իսկ թոշակառուների թիվը միայն 2010-2016 թթ. աճել է միանգամից 8.7 %-ով (տե՛ս աղյուսակ 2): Ավելին, ըստ փորձագիտական հաշվարկների, մինչև 2030 թ. Ռուսաստանում աշխատունակ բնակչության թվաքանակը 2010 թ. համեմատ (142.8 մլն մարդ)[5] կնվազի 12 %-ով, որի հետևանքով այդ երկրում աշխատանքային միգրանտների նկատմամբ պահանջարկը էապես կաճի և կկազմի 12 մլն մարդ[6]: Դա նշանակում է, որ տնտեսական աճ ապահովելու դեպքում աշխատունակ բնակչության պահանջարկը Ռուսաստանը պետք է բավարարի աշխատանքային միգրանտներ ներգրավելու հաշվին: Իսկ ԵԱՏՄ

---

[3] Հաշվարկը կատարվել է «International Migration Report 2017: Highlights». United Nations, New York, 2017, էջ 9 և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային կայքի (http://www.eurasiancommission.org) տվյալների հիման վրա (մուտքը՝ 26.10.2018 թ.):

[4] Տե՛ս **Զ. Ա. Թադևոսյան**, Կապիտալի և աշխատուժի միջազգային միգրացիա. իրավիճակը և հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2005, էջ 152:

[5] Տե՛ս http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Pages/population.aspx (մուտքը՝ 26.10.2018 թ.):

[6] Տե՛ս **Котляров Н.Н., Левченко Л.В., Алексеев П.В.** Проблемы и перспективы свободного движения рабочей силы в ЕАЭС // Экономические науки. 2015, № 12, էջ 140, աղբյուրը՝ http://ecsn.ru/files/pdf/201512.pdf (մուտքը՝ 20.10.2018 թ.):

երկրներից էժան աշխատուժի ներհոսքը նաև բարենպաստ պայմաններ կարող է առաջացնել ցածր ինքնարժեքով մրցունակ ապրանքներ և ծառայություններ արտաքին շուկաներ արտահանելու համար:

Աղյուսակ 2

ԵԱՏՄ երկրների տնտեսապես ակտիվ բնակչության և թոշակառուների թվաքանակը[7]

հազ. մարդ

Երկրներ	*Տնտեսապես ակտիվ բնակչություն*			*Թոշակառուներ*		
	2007	*2016*	*Փոփոխությունը (%)*	*2010*	*2016*	*Փոփոխությունը (%)*
Հայաստան	1,184	1,226	*3.5*	520	469	*-9.8*
Բելառուս	4,567	5,164	*13.1*	2,469	2,619	*6.1*
Ղազախստան	8,228	8,999	*9.4*	1,695	2,062	*21.7*
Ղրղզստան	2,344	2,547	*8.7*	575	661	*15.0*
Ռուսաստան	75,289	76,636	*1.8*	39,706	43,177	*8.7*

Հայաստան

Հայաստանը, որն անկախության հռչակումից ի վեր աշխատուժ արտահանող երկիր է, աչքի է ընկնում նաև բնակչության ընդհանուր թվաքանակի շարունակական նվազմամբ: Վերջին երեք տասնամյակում երկիրը լքել է 634.7 հազ. մարդ: Այդ միտումը շարունակվում է մինչ օրս. եթե 2000 թ. մշտական բնակչության թվաքանակը 3,221.1 հազ. մարդ էր, ապա 2017 թ.՝ 2,979.5 հազ. (2000 թ. համեմատ նվազել է 241.6 հազ.-ով կամ 7.5 %-ով)[8]: Հայաստանից էմիգրացման հիմնական պատճառներն են զբաղվածության հիմնախնդիրները, ինչպես առհասարակ աշխատանքի, այնպես էլ ըստ մասնագիտության աշխատանքի բացակայությունը և ամենակարևորը՝ արժանավայել ապրուստ ապահովող վարձատրությամբ աշխատատեղերի պակասը[9]: Ռուսաստանում գտնվող հայ միգրանտների կեսից ավելին աշխատում է շինարարության ոլորտում[10], ինչը հիմնականում սեզոնային է և հետևաբար կայուն եկամուտներ չի ապահովում: Հարկ է նշել, որ Հայաստանի մշտական բնակչության թվաքանակի անընդհատ նվազումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ արտագնա աշխատանքի

---

[7] Աղյուսակը կազմվել է «Статистический ежегодник Евразийского экономического союза: Евразийская экономическая комиссия». М., 2017, էջ 68, «Государства – члены Евразийского экономического союза в цифрах: статистический ежегодник»; Евразийская экономическая комиссия. М.: 2015, с. 66 և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային կայքի (http://www.eurasiancommission.org) տվյալների հիման վրա (մուտքը՝ 26.10.2018 թ.):

[8] https://www.armstat.am/am/?nid=12&id=11001&submit= %D5 %93 %D5 %B6 %D5 %BF % D6 %80 %D5 %A5 % (մուտքը՝ 26.10.2018 թ.):

[9] Տե՛ս **Զ. Թադևոսյան և ուրիշ.**, Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 39:

[10] Տե՛ս http://www.smsmta.am/?menu_id=129 (մուտքը՝ 26.10.2018 թ.):

մեկնող միգրանտները ռեցիպիենտ երկրի աշխատաշուկայում հաստատվելուց և հատկապես տվյալ երկրի քաղաքացիություն ստանալուց հետո իրենց մոտ են տանում ընտանիքի անդամներին, որոնց մեծ մասն այլևս չի վերադառնում հայրենիք: Այս միտումն ավելի է խորանում դեռևս շարունակվող գործազրկության բարձր մակարդակի պատճառով, որը ժողովրդագրական լուրջ խնդիրներ է առաջացնում Հայաստանի համար: Մյուս կողմից՝ աշխատուժի միգրացիան ապահովում է դրամական փոխանցումների մեծ ներհոսք (2017 թ. տվյալներով՝ ՀՆԱ-ի 15.2 %-ը), որի ընդհանուր ծավալի 63.6 %-ը ԵԱՏՄ երկրներից կատարված փոխանցումներն են, որոնց գերակշիռ մասը՝ Ռուսաստանից: Չնայած այս ամենին՝ անհամեմատելի են մեր երկրի վատթարացող ժողովրդագրական վիճակի քայքայիչ հետևանքները նույնիսկ տնտեսության զարգացման կամ կայունության պահպանման համար կարևոր նշանակություն ունեցող դրամական փոխանցումների ներհոսքի թեկուզև մեծ ծավալների հետ:

Ինչ վերաբերում է աշխատանքային իմիգրացիային, ապա այդ թիվը Հայաստանում մեծ չէ: 2017 թվականի վերջին Հայաստանում օտարերկրյա վարձու աշխատողների թվաքանակը կազմել է 4586 մարդ (ընդհանուր զբաղվածների ընդամենը 0.43 %-ը), որոնց գերակշիռ մասը՝ շուրջ 63 %-ը, ունի բարձրագույն և հետբուհական կրթություն[11]: Նրանք հիմնականում ներգրավված են կրթության, գիտության, տեղեկատվության և կապի, մշակող արդյունաբերության, առևտրի, առողջապահության ոլորտներում և առավելապես իրականացնում են նեղ մասնագիտական գործունեություն: Ընդ որում՝ օտարերկրացի աշխատողների մեծ մասը հայեր են: Ի դեպ, բավականին շատ են նաև կրթություն ստանալու նպատակով Հայաստան ժամանած իմիգրանտները՝ 41 %[12]:

Բելառուս

Իմիգրացիայի տեսանկյունից Բելառուսի տնտեսական զարգացման տեմպերը վկայում են այն մասին, որ մոտ ապագայում քիչ հավանական է, որ այն դառնա աշխատանքային միգրանտներ ընդունող երկիր: Ինչ վերաբերում է այդ երկրից աշխատուժի արտահոսքին, ապա հարկ է նշել, որ յուրաքանչյուր չորրորդ ընտանիքից առնվազն մեկը մեկնել է արտագնա աշխատանքի: Նրանց թիվը տատանվում է 600 հազ.-ից մինչև 1 մլն-ի միջև, ընդ որում՝ միայն 200-300 հազ. մարդ աշխատում է Ռուսաստանում, որոնց մեծ մասը բարձր որակավորմամբ

[11] Տե՛ս http://www.mlsa.am/?p=12928 (մուտքը՝ 05.11.2018 թ.):

[12] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 23.03.2017 թ. նիստի թիվ 12 արձանագրային որոշման հավելված, էջ 10, աղբյուրը՝ http://www.mtad.am/u_files/file/iravakan %20akter/12-16ardz.pdf (մուտքը՝ 05.11.2018 թ.):

մասնագետներ են[13]: Իհարկե, դա թուլացնում է այդ երկրի մտավոր ներուժը, սակայն միաժամանակ նվազեցնում է որակավորված քաղաքացիների գործազրկության մակարդակը՝ դրանով նպաստելով սոցիալական լարվածության թուլացմանը:

Ղազախստան

Միգրացիոն գործընթացների կարգավորումը Ղազախստանի պետական քաղաքականության հիմնական ուղղություններից է: Այդ կապակցությամբ ընդունվել են մի շարք օրենքներ, որոշումներ և հայեցակարգեր, որոնց հիմնական նպատակներն են պետական անվտանգության ամրապնդումը, երկրի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական կայուն զարգացման ապահովումը, միգրանտների իրավունքների իրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, բարձրագույն կրթությամբ, նորարարական, ֆինանսական և ներդրումային ներուժ ունեցող իմիգրանտների ներգրավումը և էթնիկ ղազախների հայրենադարձությունը հայրենիք: Այս միջոցառումների շնորհիվ 1991-2005 թթ. Ղազախստան է վերադարձել 953,908 էթնիկ ղազախ (61.5 %-ը՝ Ուզբեկստանից, 14.3 %-ը՝ Չինաստանից, 9.3 %-ը՝ Մոնղոլիայից, 6.8 %-ը՝ Թուրքմենստանից, 4.6 %-ը՝ Ռուսաստանից և 3.5 %-ը՝ այլ երկրներից)[14]:

Չնայած օտարերկրյա աշխատուժի նկատմամբ մեծ պահանջարկին՝ Ղազախստանը, այնուամենայնիվ, աշխատանքի ներքին շուկայի պաշտպանության նպատակով յուրաքանչյուր տարի սահմանում է արտասահմանյան մասնագետների ներգրավման քվոտաներ: Ըստ այդմ՝ 2017 թ. ապրիլի 1-ի դրությամբ միայն տեղական գործադիր մարմինների թույլտվությամբ Ղազախստանում աշխատանքային գործունեություն է ծավալում 28 հազար 842 օտարերկրյա քաղաքացի (43 %-ը՝ Չինաստանից, 11.3 %-ը՝ Թուրքիայից, 7.8 %-ը՝ Ուզբեկստանից, 4.3 %-ը՝ Մեծ Բրիտանիայից, 4.2 %-ը՝ Հնդկաստանից և 29.4 %-ը՝ այլ երկրներից), որոնք հիմնականում աշխատում են շինարարության (56.1 %), լեռնահանքային արդյունաբերության (7.9 %), ծառայությունների մատուցման (7.8 %), վերամշակող արդյունաբերության (4.4 %) և այլ ոլորտներում[15]: Պետք է նշել, սակայն, որ 2017 թ. հունվարի 1-ից այս երկիրն ընդունել է երրորդ (ոչ ԵԱՏՄ անդամ) երկրներից օտարերկրյա աշխատուժի ներգրավման առավել պարզեցված ընթացակարգեր, որոնց շնորհիվ կրճատվել են աշխատանքային թույլտվություն տրամադրելու ժամկետները, և վերացվել են գործատուների նկատմամբ կի-

---

[13] Տե՛ս **Старостин А.** Свобода перемещения трудовых ресурсов в ЕАЭС к 2025 г. // Перспективы развития проекта ЕАЭС к 2025 году. Рабочая тетрадь. Спецвыпуск, 2017; Российский совет по международным делам (РСМД). М.: НП РСМД, 2017, էջ 67:

[14] Տե՛ս https://www.enbek.gov.kz/ru/node/330063 (մուտքը՝ 26.10.2018 թ.):

[15] Տե՛ս https://www.enbek.gov.kz/ru/node/344757 (մուտքը՝ 26.10.2018 թ.):

բառվող վարչական պահանջները՝ փոխարենը նրանց համար սահմանելով հարկային գանձումներ. գործատուն յուրաքանչյուր օտարերկրյա աշխատուժի համար պետք է վճարի 290-ից մինչև 530,000 տենգե[16]՝ կախված գործունեության ոլորտից: Օտարերկրյա աշխատանքային իմիգրանտների ներգրավման ընթացակարգերի պարզեցումը նպատակ ունի համալրելու այն բացը, որն առաջացել է ՌԴ «Հայրենակիցների վերաբնակեցում» պետական ծրագրով դեպի Ռուսաստան ղազախների արտագաղթի հետևանքով (2007-2017 թթ. Ռուսաստան մեկնած ղազախների թիվը կազմում է մոտ 120 հազ. կամ ծրագրի շրջանակներում տեղափոխվածների ընդհանուր թվաքանակի 20.6 %-ը)[17]:

Ղրղզստան

Ունենալով տնտեսական զարգացման բավականին ցածր մակարդակ և առավելապես լինելով աշխատուժի դոնոր երկիր՝ ԵԱՏՄ-ին անդամակցությունից հետո զգալիորեն ավելացավ Ղրղզստանից աշխատանքային միգրանտների հոսքը դեպի Ռուսաստան և Ղազախստան: Էմիգրանտների դերը Ղրղզստանի տնտեսության համար կարևորվում է հատկապես օտարերկրյա դրամական փոխանցումների առումով: Բավական է նշել, որ միայն 2017 թ. դեպի Ղրղզստան դրամական փոխանցումների ընդհանուր ծավալը, որը գրեթե ամբողջությամբ կատարվել է Ռուսաստանից, կազմել է այդ երկրի ՀՆԱ-ի 32.8 %-ը[18]: Որակական առումով Ղրղզստանի համար աշխատանքային միգրացիան բացասական հետևանքներ է թողել հատկապես 2000-2010 թթ., երբ Ռուսաստանի և Ղրղզստանի միջև գործող քաղաքացիություն ստանալու պարզեցված ընթացակարգերի պատճառով այդ երկիրը լքեցին բարձրորակ մասնագետներ (բժիշկներ, մանկավարժներ, ինժեներներ, մտավորականներ)՝ արտագաղթելով Ռուսաստան (կամ Ղազախստան), որի հետևանքով ներկայումս Ղրղզստանի բազմաթիվ հեռավոր շրջաններում զգացվում է մասնագետների զգալի պակաս:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, 2013-2017 թթ. ԵԱՏՄ երկրների շարքում բնակչության միջպետական զուտ միգրացիայի բացասական հաշվեմնացորդ ունեն միայն Հայաստանը, Ղազախստանն ու Ղրղզստանը, ընդ որում՝ թե՛ քանակական առումով և թե՛ բնակչության թվաքանակի նկատմամբ տեսակարար կշռով առաջին տեղում է Հայաստանը (2017 թ. տվյալներով՝ -23.5 հազ. մարդ կամ բնակչության միջին թվաքանակի 0.8 %-ը)[19]: Նկատենք, որ թեև Ղազախստանի բնակչութ-

---

[16] 31.12.2018 թ. դրությամբ 1 տենգեի փոխարժեքը կազմում է 1.289 ՀՀ դրամ:

[17] Տե՛ս http://armtimes.com/hy/article/120981:

[18] Հաշվարկը կատարվել է «Евразийский экономический союз в цифрах: краткий статистический сборник», Евразийская экономическая комиссия. М., 2018, էջ 44 և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային կայքի (http://www.eurasiancommission.org) տվյալների հիման վրա (մուտքը՝ 01.11.2018 թ.):

[19] ՀՀ վիճակագրական տեղեկագրերում բնակչության միջպետական միգրացիայի

յունը ավելի քան 6 անգամ գերազանցում է Հայաստանի բնակչությանը, սակայն երկու երկրներն էլ արտագաղթի ծավալներով գրեթե նույն մակարդակի վրա են: Իսկ եթե հաշվի առնենք, որ էմիգրացիայի մեծ ծավալներին զուգահեռ Ղազախստանի բնակչությունն անընդհատ աճում է, իսկ Հայաստանինը՝ ընդհակառակը՝ նվազում, ապա ակնհայտ է, որ Հայաստանը լրջորեն կանգնած է ժողովրդագրական հիմնախնդրի առջև, և լուծումներ չգտնելու դեպքում կարող են առաջանալ նաև անվտանգային էական սպառնալիքներ: Իսկ Ղազախստանում բնակչության աճին զուգահեռ՝ յուրաքանչյուր տարի արտաքին միգրացիայի բացասական հաշվեմնացորդը (2017 թ.՝ -21.6 հազ. մարդ) դեռ հեռու է ժողովրդագրական խնդիրներ առաջացնելու վտանգից, մանավանդ որ այն այդ երկրի բնակչության ընդամենը 0.1 %-ն է: Ինչ վերաբերում է Ղրղզստանի զուտ միգրացիայի բացասական հաշվեմնացորդին (2017 թ.՝ -3.9 հազ. մարդ), որը, ի դեպ, վերջին տարիներին ունի նվազման միտում, 2017 թ. կազմել է բնակչության թվաքանակի չնչին՝ ընդամենը 0.06 %-ը, և դա այն դեպքում, երբ Ղրղզստանի բնակչությունը ևս տարեցտարի աճում է:

ԵԱՏՄ անդամ մյուս երկրները՝ Բելառուսը և Ռուսաստանը, մշտապես ունեցել են բնակչության արտաքին զուտ միգրացիայի դրական հաշվեմնացորդ (2017 թ.՝ համապատասխանաբար 3.9 հազ. և 211.9 հազ. մարդ): Եթե Բելառուսում այն բնակչության թվաքանակի նկատմամբ մեծ տեսակարար կշիռ չի կազմում (2017 թ.՝ 0.04 %), ապա Ռուսաստանում այդ մասնաբաժինը համեմատաբար մեծ է (2017 թ.՝ 0.14 %):

Աղյուսակ 3

Բնակչության միջազգային միգրացիան ԵԱՏՄ անդամ երկրներում 2013-2017 թթ.[20]

մարդ

	2013	*2014*	*2015*	*2016*	*2017*
			Հայաստան		
Բնակչության թվաքանակը	**3,021,979**	**3,013,839**	**3,004,588**	**2,992,364**	**2,979,442**
Ժամանածներ*	12,300	10,700	10,600	8,200	9,300
Մեկնածներ*	36,700	32,500	36,500	33,000	32,800
Ժամանածներ**	-	13,022	2,160	2,427	3,133
Մեկնածներ**	-	4,267	3,041	2,520	2,847

վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են ըստ ՀՀ բնակչության վարչական տեղաշարժերի հաշվառման արդյունքների և ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, ուստի աղյուսակ 3-ում համեմատության համար արտացոլված են թե՛ առաջին և թե՛ երկրորդ տվյալները:

[20] Աղյուսակը կազմվել է https://www.armstat.am/am/?nid=81&id=1991, http://www. eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Documents/Express_Demography/ expressdemogr201712.pdf, http://eec.eaeunion.org/ru/act/integr_i_akroec/dep_stat/econstat/ Pages/ population.aspx, http://www.eurasiancommission.org/ru/act /integr_i_makroec/dep _stat/econstat/Pages/ population.aspx էլեկտրոնային կայքերի տվյալների հիման վրա (մուտքը՝ 01.11.2018 թ.):

*Զուտ միգրացիա**	*-24,400*	*-21,800*	*-25,900*	*-24,792*	*-23,500*
*Զուտ միգրացիա***	*-*	*8,755*	*-881*	*-93*	*286*
Բելառուս					
Բնակչության թվաքանակը	**9,465,997**	**9,474,511**	**9,489,616**	**9,501,534**	**9,498,264**
Ժամանածներ	19,435	24,941	28,349	21,038	18,961
Մեկնածներ	7,792	9,219	9,855	13,098	15,087
Զուտ միգրացիա	*11,643*	*15,722*	*18,494*	*7,940*	*3,874*
Ղազախստան					
Բնակչության թվաքանակը	**17,035,551**	**17,288,285**	**17,542,806**	**17,794,055**	**18,037,776**
Ժամանածներ	24,077	16,784	16,581	13,755	16,081
Մեկնածներ	24,405	28,946	30,047	34,900	37,704
Զուտ միգրացիա	*-328*	*-12,162*	*-13,466*	*-21,145*	-21,623
Ղրղզստան					
Բնակչության թվաքանակը	**5,719,852**	**5,835,816**	**5,957,271**	**6,079,840**	**6,198,465**
Ժամանածներ	4,349	3,928	3,559	3,160	1,974
Մեկնածներ	11,552	11,685	7,788	7,125	5,899
Զուտ միգրացիա	*-7,203*	*-7,757*	*-4,229*	*-3,965*	*-3,925*
Ռուսաստան					
Բնակչության թվաքանակը	**143,506,995**	**143,819,666**	**146,405,999**	**146,674,541**	**146,842,402**
Ժամանածներ	482,240	578,511	598,617	575,158	589,033
Մեկնածներ	186,382	308,475	353,233	313,210	377,153
Զուտ միգրացիա	*295,858*	*270,036*	*245,384*	*261,948*	*211,880*

** ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների*

*** ըստ ՀՀ բնակչության վարչական տեղաշարժերի հաշվառման արդյունքների*

Վերլուծելով ԵԱՏՄ անդամ երկրների միջև բնակչության միգրացիոն տեղաշարժերը (տե՛ս աղյուսակ 4)՝ հարկ է նշել, որ դրանք թե՛ ներհոսքի և թե՛ արտահոսքի առումով զգալի տեսակարար կշիռ են կազմում: Հատկապես տարեկան կտրվածքով բնակչության ընդհանուր արտահոսքի մեջ ունեցած մասնաբաժնով բարձր դիրքեր են զբաղեցնում Ղրղզստանը (2016 թ.՝ 95.5 %) և Ղազախստանը (2016 թ.՝ 88.3 %), իսկ ամենացածրը՝ Ռուսաստանը (2016 թ.՝ 29.9 %): Հատկանշական է, որ ԵԱՏՄ կազմավորումից հետո 2014 թ. համեմատ Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի էմիգրացիոն հոսքերում նկատվում է դեպի ԵԱՏՄ այլ երկրներ մեկնողների տեսակարար կշռի աստիճանական նվազում, իսկ Հայաստանում և Ռուսաստանում՝ ընդհակառակը՝ աճ: ԵԱՏՄ երկրներում իմիգրացիայի ընդհանուր ծավալի մեջ ներհոսքի ամենամեծ մասնաբաժինը գրանցվել է Ղրղզստանում (2016 թ.՝ 74.4 %), իսկ ամենափոքրը՝ Հայաստանում (2016 թ.՝ 16.4 %), թեև քանակական առումով ամենամեծը գրանցվել է Ռուսաստանում (156.1 հազ. մարդ) և Բելառուսում (7.7 հազ. մարդ):

Աղյուսակ 4

Բնակչության միջազգային միգրացիան ԵԱՏՄ շրջանակներում 2014-2016 թթ.[21]

մարդ

	2014	*2015*	*2016*
Հայաստան			
Ժամանածներ (ԵԱՏՄ երկրներից)*	2,683	366	397
Տես. կշիռը ժամանածների ընդհ. թվի մեջ (%)	*20.6*	*16.9*	*16.4*
Մեկնածներ (դեպի ԵԱՏՄ երկրներ)*	1,288	1,003	821
Տես. կշիռը մեկնածների ընդհ. թվի մեջ (%)	*30.2*	*33.0*	*32.6*
Զուտ միգրացիան ԵԱՏՄ երկրների հետ	***1,395***	***-637***	***-424***
Բելառուս			
Ժամանածներ (ԵԱՏՄ երկրներից)	10,877	9,704	7,706
Տես. կշիռը ժամանածների ընդհ. թվի մեջ (%)	*43.6*	*34.2*	*36.6*
Մեկնածներ (դեպի ԵԱՏՄ երկրներ)	4,896	5,292	6,147
Տես. կշիռը մեկնածների ընդհ. թվի մեջ (%)	*53.1*	*53.7*	*46.9*
Զուտ միգրացիան ԵԱՏՄ երկրների հետ	***5,981***	***4,412***	***1,559***
Ղազախստան			
Ժամանածներ (ԵԱՏՄ երկրներից)	4,940	4,975	4,569
Տես. կշիռը ժամանածների ընդհ. թվի մեջ (%)	*29.4*	*30.0*	*33.2*
Մեկնածներ (դեպի ԵԱՏՄ երկրներ)	25,610	26,454	30,822
Տես. կշիռը մեկնածների ընդհ. թվի մեջ (%)	*88.5*	*88.0*	*88.3*
Զուտ միգրացիան ԵԱՏՄ երկրների հետ	***-20,670***	***-21,479***	***-26,253***
Ղրղզստան			
Ժամանածներ (ԵԱՏՄ երկրներից)	3,136	2,586	2,350
Տես. կշիռը ժամանածների ընդհ. թվի մեջ (%)	*79.8*	*72.7*	*74.4*
Մեկնածներ (դեպի ԵԱՏՄ երկրներ)	11,364	7,488	6,802
Տես. կշիռը մեկնածների ընդհ. թվի մեջ (%)	*97.3*	*96.1*	*95.5*
Զուտ միգրացիան ԵԱՏՄ երկրների հետ	***-8,228***	***-4,902***	***-4,452***
Ռուսաստան			
Ժամանածներ (ԵԱՏՄ երկրներից)	152,028	155,206	156,077
Տես. կշիռը ժամանածների ընդհ. թվի մեջ (%)	*26.3*	*25.9*	*27.1*
Մեկնածներ (դեպի ԵԱՏՄ երկրներ)	65,330	85,062	93,784
Տես. կշիռը մեկնածների ընդհ. թվի մեջ (%)	*21.2*	*24.1*	*29.9*
Զուտ միգրացիան ԵԱՏՄ երկրների հետ	***86,698***	***70,114***	***62,293***

** ըստ ՀՀ բնակչության վարչական տեղաշարժերի հաշվառման արդյունքների*

Ընդհանուր առմամբ 2016 թ. ընթացքում ԵԱՏՄ երկրների հետ միգրացիայի տարեկան հաշվեմնացորդները դրական են Ռուսաստանում և Բելառուսում՝ կազմելով համապատասխանաբար 62.3 հազ. և 1.6 հազ., իսկ բացասական՝ Ղազախստանում, Ղրղզստա-

[21] Աղյուսակը կազմվել է «Статистический ежегодник Евразийского экономического союза», Евразийская экономическая комиссия. М., 2017, էջ 46-48, «Евразийский экономический союз в цифрах: статистический ежегодник», Евразийская экономическая комиссия. М., 2016, էջ 46-48 և http://eec.eaeunion.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/ econstat/Pages/population.aspx էլեկտրոնային կայքի տվյալների հիման վրա (մուտքը՝ 01.11.2018 թ.):

նում և Հայաստանում՝ համապատասխանաբար -26.3 հազ., -4.5 հազ. և -0.4 հազ.:

Նշենք, որ Ռուսաստանում, որտեղ ԵԱՏՄ երկրների շարքում յուրաքանչյուր տարի գրանցվում է միջազգային միգրանտների ամենամեծ ներհոսքը, միգրացիոն ծառայություններում 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական կամ ժամանակավոր հաշվառման էր կանգնած ԵԱՏՄ անդամ այլ երկրներից ժամանած 2,519,400 քաղաքացի, ինչը, ի դեպ, այդ երկրում հաշվառված օտարերկրյա քաղաքացիների ընդհանուր թվաքանակի 16 %-ն է[22]: Ինչպես երևում է աղյուսակ 5-ից, Ռուսաստանում ամենաշատը հաշվառման են կանգնած Ղրղզստանի (879.6 հազ.), Հայաստանի (657.6 հազ.) և Ղազախստանի (587.7 հազ.) քաղաքացիներ, որոնք կազմում են ԵԱՏՄ անդամ երկրների՝ Ռուսաստանում հաշվառված քաղաքացիների ընդհանուր թվաքանակի համապատասխանաբար 34.9, 26.1 և 23.3 %-ը: Հետաքրքրական է, սակայն, որ 2017 թ. տարեվերջի դրությամբ ԵԱՏՄ անդամ երկրների մշտական բնակչության թվաքանակի նկատմամբ Ռուսաստանում հաշվառված այդ երկրների քաղաքացիների ամենամեծ տեսակարար կշիռը ունեցել է Հայաստանը (22.1 %), այսինքն՝ բնակչության գրեթե 1/4-ը: Այս ցուցանիշով երկրորդ տեղում է Ղրղզստանը (14.2 %), երրորդում՝ Բելառուսը (4.2 %), իսկ չորրորդում՝ Ղազախստանը (3.3 %)[23]:

Նկատենք, որ Ռուսաստանում ԵԱՏՄ ձևավորումից հետո աճում են Հայաստանի, Ղրղզստանի, ոչ մեծ տեմպերով՝ նաև Ղազախստանի քաղաքացիների հաշվառման փաստերը, իսկ Բելառուսի քաղաքացիների թիվը, ճիշտ է, 2014 թ. համեմատ 2016 թ. էապես նվազել է, սակայն 2017 թ. կրկին աճի միտում ունի: Ի դեպ, 2016 թ. համեմատ 2017 թ. Ռուսաստանում հաշվառված անձանց ամենամեծ աճը Հայաստանի քաղաքացիներին է (14.1 %), որին հաջորդում է հենց Բելառուսը (7.7 %):

Միաժամանակ անհրաժեշտ է շեշտել, որ 2014 թ. համեմատ 2016 թ. ՌԴ միգրացիոն ծառայություններում հաշվառված անձանց թվաքանակի աճը իրականում պայմանավորված է եղել ոչ այնքան Ռուսաստան ժամանածների փաստացի աճով, որքան այն հանգամանքով, որ եթե նախկինում Ռուսաստանում աշխատող ԵԱՏՄ այլ պետությունների քաղաքացիների մի մասը աշխատում էր անօրինական ճանապարհով (առանց աշխատանքային թույլտվության կամ արտոնագրի)՝ ներառվելով «սև ցուցակի» մեջ, ապա, սկսած 2015 թ. հունվարի 1-ից, երբ ուժի մեջ մտավ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրը, որը հնարավորություն տվեց ԵԱՏՄ անդամ պետությունների քաղաքացիներին աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատելու Ռուսաստանում, այդ ցուցակում ընդգրկված անձանց զգալի մասը ինքնակամ հաշվառման կանգ-

[22] Տե՛ս https://xn--b1aew.xn--p1ai/Deljatelnost/statistics/migracionnaya/1/ (մուտքը՝ 27.10.2018 թ.):

[23] Հաշվարկը կատարվել 3-րդ և 5-րդ աղյուսակներում նշված տվյալների հիման վրա:

նեց համապատասխան մարմիններում, ինչի շնորհիվ կտրուկ աճեց Ռուսաստանում հաշվառված ԵԱՏՄ այլ պետությունների քաղաքացիների թիվը: Ռուսաստանում հաշվառում չունեցողներից ամենաշատը Ղրղզստանի քաղաքացիներն են. այսպես, եթե 2014 թ. սկզբին Ռուսաստանի միգրացիոն ծառայությունների «սև ցուցակի» մեջ ներառված էր Ղրղզստանի 194 հազ. քաղաքացի, ապա մեկ տարի անց այդ թիվը նվազեց միանգամից 76 հազ.-ով[24]:

Աղյուսակ 5

ՌԴ միգրացիոն մարմիններում հաշվառված ԵԱՏՄ այլ երկրների քաղաքացիների թվաքանակը 2014, 2016 և 2017 թթ. [25]

մարդ

	2014	*2016*		*2017*	
	Միգրացիոն մարմիններում հաշվառվածների թիվը	***Միգրացիոն մարմիններում հաշվառվածների թիվը***	*որից՝ հիմնական հաշվառվածներ*	***Միգրացիոն մարմիններում հաշվառվածների թիվը***	*որից՝ հիմնական հաշվառվածներ*
Հայաստան	514,663	631,746	*337,967*	657,648	*350,770*
Բելառուս	498,878	345,801	*283,372*	394,449	*318,187*
Ղազախստան	575,400	545,676	*399,516*	587,728	*419,403*
Ղրղզստան	552,014	826,640	*474,058*	879,575	*479,940*
Ընդամենը	**2,140,955**	**2,349,863**	***1,494,913***	**2,519,400**	***1,568,300***

Ռուսաստանում հիմնական հաշվառում ստացած ԵԱՏՄ այլ երկրների քաղաքացիների (1,1568.3 հազ.) շրջանում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջիններս Ռուսաստանում են գտնվում հիմնականում աշխատելու նպատակով: Այսպես, 2017 թ. վերջի դրությամբ այդ քաղաքացիների կեսից ավելին՝ 52.4 %-ը (821.9 հազ. մարդ) ժամանման երկրում է գտնվում աշխատելու, 29.9 %-ը՝ մասնավոր, 6.5 %-ը՝ ուսման, 5.6 %-ը՝ զբոսաշրջության և 5.5 %-ը՝ այլ նպատակներով: Ընդ որում, 2016 թ. համեմատ 2017 թ. աճի ամենամեծ տեմպը (10.9 %) գրանցել են հենց աշխատելու նպատակով հաշվառման կանգնած ԵԱՏՄ երկրների քաղաքացիները: Մեծ մասամբ աշխատելու նպատակով Ռուսաստանում մշտական հաշվառում ստանալու միտումն առկա է ԵԱՏՄ անդամ բոլոր երկրների քաղաքացիների դեպքում, բացի Ղազախստանից, որի քաղաքացիների հիմնական մասը (48.1 %) այդ երկրում է գտնվում մասնավոր նպատակներով (տե՛ս աղյուսակ 6):

---

[24] Տե՛ս **Старостин А.**, նշվ. աշխ., էջ 68:

[25] Տե՛ս https://xn--b1aew.xn--p1ai/Deljatelnost/statistics/migracionnaya/1/ (մուտքը՝ 27.10.2018 թ.):

Աղյուսակ 6

ՌԴ-ում միգրացիոն ծառայություններում հիմնական հաշվառում ստացած ԵԱՏՄ այլ երկրների քաղաքացիների թվաքանակը 2016-2017 թթ.՝ ըստ մուտք գործելու նպատակի[26]

հազ. մարդ

	Տուրիզմ		*Ուսում*		*Աշխատանք*		*Մասնավոր*		*Այլ*	
	2016	*2017*	*2016*	*2017*	*2016*	*2017*	*2016*	*2017*	*2016*	*2017*
Հայաստան	*8.1*	*7.3*	*8.8*	*8.3*	*209.9*	*232.2*	*99.2*	*89.7*	*12.0*	*13.3*
Բելառուս	*50.8*	*44.1*	*5.8*	*5.8*	*97.7*	*124.6*	*95.0*	*108.9*	*34.0*	*34.8*
Ղազախստան	*25.0*	*26.4*	*77.8*	*73.8*	*71.6*	*88.2*	*196.1*	*201.6*	*29.0*	*29.5*
Ղրղզստան	*17.1*	*10.8*	*12.5*	*14.5*	*361.8*	*376.8*	*73.8*	*69.3*	*8.8*	*8.4*
Ընդամենը	***101.0***	***88.6***	***104.9***	***102.4***	***741.0***	***821.8***	***464.1***	***469.5***	***83.8***	***86.0***

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ մյուս երկրներ աշխատանքային գործունեություն ծավալելու նպատակով մուտք գործած քաղաքացիների աճի շարժընթացին, ապա պետք է նշել, որ Ռուսաստան ժամանած միգրանտների համեմատ՝ մնացած երկրներում նրանց թիվը զգալիորեն փոքր է: Աղյուսակ 7-ից երևում է, որ աշխատանքային միգրանտների թվաքանակը համեմատաբար մեծ է Ղազախստանում, որը 2017 թ. վերջի դրությամբ կազմել է 15,973: Էական տարբերությամբ հաջորդ տեղում է Բելառուսը, որտեղ 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատում է ԵԱՏՄ երկրներից ժամանած ընդամենը 3,223 քաղաքացի: Հայաստանում նրանց թիվը զգալիորեն փոքր է (126), ինչը, բնականաբար, պայմանավորված է աշխատավարձերի ցածր մակարդակով և ազատ աշխատատեղերի խիստ փոքր առաջարկով: Ղրղզստանում նույն պատճառով գրեթե բացակայում է ԵԱՏՄ երկրներից աշխատանքային իմիգրացիան, փոխարենը այդ երկրում մեծ է Չինաստանից, Թուրքիայից, Պակիստանից, Սիրիայից և Աֆրիկայից մուտք գործած աշխատանքային միգրանտների թիվը, որոնց գերակշիռ մասն աշխատում է շինարարության ոլորտում[27]: Հարկ է նկատել, որ նշված երկրներում աշխատող ԵԱՏՄ միգրանտների զգալի մասը Ռուսաստանի քաղաքացի է:

[26] Տե՛ս https://xn--b1aew.xn--p1ai/Deljatelnost/statistics/migracionnaya/1 (մուտքը՝ 27.10.2018 թ.):

[27] Տե՛ս https://rus.azattyk.org/a/28650451.html (մուտքը՝ 27.10.2018 թ.):

Աղյուսակ 7

Աշխատանքի նպատակով ԵԱՏՄ անդամ երկրներ մուտք գործած ԵԱՏՄ այլ երկրների քաղաքացիների թիվը 2015-2017 թթ.[28]

մարդ

Ռեցիպիենտ երկիր	Դոնոր երկիր	*31.12.2015*	*31.12.2016*	*31.12.2017*
Հայաստան	Բելառուս	7	7	7
	Ղազախստան	8	21	17
	Ղրղզստան	1	3	3
	Ռուսաստան	109	118	99
	Ընդամենը	***125***	***149***	***126***
Բելառուս	Հայաստան	383	372	400
	Ղազախստան	653	385	313
	Ղրղզստան	72	50	57
	Ռուսաստան	2,209	2,140	2,453
	Ընդամենը	***3,317***	***2,947***	***3,223***
Ղազախստան	Հայաստան	2,074	2,297	3,022
	Բելառուս	608	817	1,077
	Ղրղզստան	1,138	2,962	3,416
	Ռուսաստան	12,529	19,371	11,458
	Ընդամենը	***16,349***	***25,447***	***15,973***
Ղրղզստան*	Հայաստան	-	-	-
	Բելառուս	-	-	-
	Ղազախստան	-	-	-
	Ռուսաստան	-	-	-
	Ընդամենը	**-**	**-**	**-**
Ռուսաստան	Հայաստան	264,135	209,887	232,247
	Բելառուս	86,463	97,743	124,633
	Ղազախստան	70,073	71,600	88,202
	Ղրղզստան	512,432	361,875	376,863
	Ընդամենը	***933,103***	***741,105***	***821,945***

** Ղրղզստանի միգրացիոն պետական ծառայությունը համապատասխան տվյալներ չի հրապարակում*

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ աշխատանքային միգրացիայի ոլորտի վերը նշված վիճակագրական տվյալները ամբողջությամբ չեն արտացոլում ԵԱՏՄ-ում միգրացիայի և հատկապես այդ կառույցի անդամ երկրներից դեպի Ռուսաստան էմիգրացիայի իրական ծավալները, քանի որ, մի կողմից, շատ հաճախ այդ երկրների միջև էմիգրացիոն և իմիգրացիոն հոսքերի վերաբերյալ վիճակագրական տվյալները չեն համապատասխանում միմյանց, մյուս կողմից՝ բացակայում են անօրինական աշխատանքային միգրացիայի վերաբերյալ տվյալները: Հաշվի առնելով հատկապես բնակչության զուտ միգրացիայի բացասական

[28] Տե՛ս http://www.eurasiancommission.org/ru/act/finpol/migration/Pages/statistical_data.aspxf (մուտքը՝ 01.11.2018 թ.):

հաշվեմնացորդ ունեցող անդամ երկրների պետական միգրացիոն մարմինների ներկայացրած վիճակագրական տվյալների նկատմամբ բնակչության թերահավատությունը՝ հնարավոր է, որ այդ երկրները է-միգրանտների իրական թվաքանակի մասին վիճակագրական հրապարակումներում դա պակաս են ներկայացնում՝ բնակչության շրջանում դժգոհությունները զսպելու նպատակով: Այս առումով անհրաժեշտ է ԵԱՏՄ անդամ երկրներում իրականացնել լայնածավալ փորձագիտական անկախ հետազոտություններ՝ աշխատանքային միգրացիայի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու և դրա հիման վրա համապատասխան եզրահանգումներ անելու համար:

Բանալի բառեր – *աշխատուժի միգրացիա, տնտեսական ինտեգրում, միգրացիոն հոսքեր, ընդունող երկիր, էմիգրացիա, իմիգրացիա, դրամական փոխանցում, վարձու աշխատող, գործատու*

МИСАК АВАГЯН – *Особенности трудовой миграции в Евразийском экономическом союзе.* – С углублением региональной экономической интеграции становится всё более актуально совершенствовать систему регулирования международной трудовой миграции. Одной из причин её роста является интенсивная региональная экономическая интеграция, которая активно развивается также в Евразийском экономическом союзе. В статье разбираются особенности и тенденции процессов, происходящих в этой сфере в странах – членах ЕАЭС, а кроме того, мотивация и структурированный анализ межгосударственной трудовой миграции в рамках ЕАЭС.

Ключевые слова: *трудовая миграция, экономическая интеграция, миграционные потоки, принимающая страна, эмиграция, иммиграция, денежный перевод, наёмный работник, работодатель*

MISAK AVAGYAN – *Features of Labour Migration in the Eurasian Economic Union.* – Along with the deepening of the processes of regional economic integration, the need to improve the system for regulating international labor migration is becoming ever more urgent. One of the reasons for the increase in international labor migration is the intensive implementation of regional economic integration processes, which are also actively developing in the Eurasian Economic Union (EAEU). The article presents the features and trends of the processes occurring in the field of labor migration of the countries members of the EAEU, as well as the motivation and structured analysis of interstate labor migration within the EAEU.

Key words: *labor migration, economic integration, migration flows, recipient country, emigration, immigration, remittance, employee, employer*

Ներկայացվել է՝ 18.01.2019, գրախոսվել է՝ 14.03.2019, ընդունվել է տպագրության՝ 22.04.2019